ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ ՓԲԸ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն թիվ 2

Հայտերի գնահատման նիստի

Սպանդարյան և Շամբ ՀԷԿ-երի համար գծային անջատիչների մատակարարման և տեղադրման աշխատանքների ձեռքբերման համար ստացված տեխնիկական հայտերի գնահատման նիստի

Գնման ծածկագիրը - **ՔԳՀԿ 14/25**
Գնման տեսակը - **բաց մրցույթ**
Գնումը ներառված է ՔԳՀԿ 2025-2027թթ. ներդրումային ծրագրում 6-րդ հավելվածում

2025թ. նոյեմբերի 14-ին, Ժամը՝ 11:20-ին Ք. Գորիս, ՀՀ

Մասնակցում էին՝	
Հանձնաժողովի նախագահ՝	Արամ Մելքումյան
Հանձնաժողովի անդամներ՝	Գավրուշա Աթայան Արտաշես Գրիգորյան Սևակ Սուրենյան Արսեն Դաջունց Արմինե Մանուկյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Արման Պետրոսյան

1. Գնահատող հանձնաժողովը ծանոթանալով ներկայացված տեխնիկական առաջարկներին և համաձայն մրցութային փաթեթի 6.3 կետի պահանջների առաջարկել էր մինչև 2025թ նոյեմբերի 11-ը պահանջել մասնակիցներից պարզաբանել հայտում ներկայացված տեղեկատվությունը և ստացված պարզաբանումների արդյունքում հանձնաժողովը հայտերը վերջնական գնահատել է հետևյալ կերպ:
2. Գնահատման արդյունքում պարզվեց, որ «Գրանդ Ինսփեքշն» ՍՊԸ-ի հայտը չի բավարարում որակավորման պահանջներին և չափանիշներին: Մասնավորապես՝ վերջին 5 տարիների միջին տարեկան հասույթը կազմում է 29,000,000 ՀՀ դրամ, մինչդեռ պահանջվում է 200,000,000 ՀՀ դրամ, իսկ նմանատիպ սարքավորման

մատակարարման և/կամ տեղադրման աշխատանքների իրականացման փորձի հետ կապված ներկայացված պայմանագիրը կազմում է 5,200,000 ՀՀ դրամ, մինչդեռ պահանջվում է 80,000,000 ՀՀ դրամ: Ուստի «Գրանդ Ինսփեքշն» ՍՊԸ-ի հայտը մերժվում է և ֆինանսական առաջարկների բացման ժամանակ հաշվի չի առնվելու: «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պարզաբանումից պարզվեց, որ առաջարկվող գծային անջատիչների արտադրանքը չի համապատասխանում տեխնիկական պահանջներին: Գնահատող հանձնաժողովը հավելեց, որ մրցույթի ընթացքում պաշտոնական պարզաբանումներ է տրամադրել սարքավորման վերաբերյալ բոլոր մասնակիցներին, և կազմակերպությունը տեղեկացված է եղել գեներատորի անջատիչ սարքի տարբերակի վերաբերյալ, սակայն ներկայացված հայտի մեջ համապատասխանությունը բացակայում է, ուստի հայտը մերժվում, քանի որ չի համապատասխանում տեխնիկական բնութագրի պահանջներին և հայտը ֆինանսական առաջարկների բացման ժամանակ հաշվի չի առնվելու:

3. Գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ MATELEC SAL-ի և Global Energy Group-ի հայտերը բավարարում են որակավորման չափանիշներին և տեխնիկական պահանջներին: Հաշվի առնելով վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը առաջարկեց ծանուցել այն հայտատուներին ում առաջարկները չեն համապատասխանել մրցույթի պահանջներին և որակազրկվել են, որ ֆինանսական առաջարկի բացման ժամանակ իրենց հայտերը հաշվի չեն առնվելու և բացել ֆինանսական առաջարկները ս.թ. նոյեմբերի 13-ին:
4. Ֆինանսական հայտերը բացվեցին ս.թ. նոյեմբերի 13-ին ժամը 17:05, և ZOOM հեռահար զանգի ընթացքում բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչները միացել էին առցանց բացման նիստին: Coupa համակարգում առցանց բացվեցին հայտատուների կողմից ներկայացված առաջարկները, և արձանագրվեց հետևյալ արդյունքները՝

N	Մասնակից	Առաջարկված գինը	ՀՀ դրամ համարժեք
1	Global Energy Group LLC	427,000 ԱՄՆ դոլար	170,800,000.00
2	MATELEC SAL	787,752 Եվրո	356,891,043.60

Գնահատող հանձնաժողովը ծանոթանալով գնային առաջարկներին, որոշեց հայտատուներին հրավիրել աճուրդի՝ COUPA համակարգի միջոցով մրցունակ գներ ստանալու նպատակով: Լրացուցիչ տեղեկացնել մասնակիցներին կայանալիք աճուրդի մանրամասներին:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների միաձայն համաձայնվեցին առաջարկներին:

Հանձնաժողովի անդամներ՝	Արամ Մելքումյան	Aram Melkumyan box SIGN 4Z73PZK1-17R3QK82
	Գավրուշա Աթայան	box SIGN 469RY921-17R3QK82

	Արտաշես Գրիգորյան	Artashes Grigoryan box SIGN 193KY3Z1-17R3QK82
	Արսեն Դաջունց	box SIGN 4Z7JL981-17R3QK82
	Սևակ Սուրենյան	box SIGN 18R9VPJ1-17R3QK82
	Արմինե Մանուկյան	box SIGN 4YPQ7PR1-17R3QK82
Հանձնաժողովի քարտուղար՝	Արման Պետրոսյան	box SIGN 13XV3ZQ4-17R3QK82